

*
* *

Օրս տրտում, սև է անցնում, յոյսս է վաղուան
օրուան վերայ.
Վաղուան օրն էլ սև-ամպի պէս եկաւ, նստաւ սրտիս
վերայ.
Հիմա դարձեր, ափսոս կ'ասեմ, անցած օրին երնէկ
կուտամ.

Ափսոս կուտամ դալար կեանքիս, որ շուտ ընկաւ չար-
քաշ ճամբայ:
Ու օրերիս կարաւանը տխուր-տրտում առաջ կ'եր-
թայ.

Հազար ցաւով, մարդկանց ցաւով ծանր բեռնած ճամ-
բայ կ'երթայ.

Ա՛խ, օրերիս կարաւանը աչքը՝ կարօտ, սիրտը՝ կարօտ.
Ու աշխարհիս ցաւով բեռնած էս աշխարհով կ'անցնի,
կ'երթայ:

Ու մի օր էլ չոր չօլի մէջ կարաւանս կ'իջնի դադ-
րած,
Վար կը դնէ մէջքի բեռը—կեանքս, կեանքս մոխիր,
դարձած.

Ա՛խ, օրերիս կարաւանը աչքը՝ փափագ, սիրտը՝ պապակ,
Փուչ աշխարհիս ցաւով բեռնած էս աշխարհով կ'անցնի,
կ'երթայ...

Կարաւանս երբ որ իջնի, ես ինձ ու ինձ հաշիւ
կ'անեմ:

Թէ ո՞ւր հասայ, թէ ի՞նչ տեսայ, ինչո՞ւ եկայ էս մեծ
ճամբէն.

Նա՛տ դադրեցայ, շա՛տ չարչրուայ, հաշիւ անեմ, շահս
ինչ էր,

Ախր ինչո՞ւ ոտ դրեցի էս սուր ու փուշ, դժուար
ճամբէն:

Ծոֆը ընկած մարդու նման նամարդ օձից կախ ենք
ընկել.—

Նամարդ օձը էս աշխարհն է—ու աշխարհին աչք ենք
քցել:

Ախ, աշխարհից մի յոյս չը կայ—ծիծուկների ենք կե-
րակուր:

Մի բուռ հողն է մեր բաժինը, թէ տէր դառնանք աշ-
խարհին էլ:

Ախ, մէրիկներ, հող պիտ' դառնաք, ինչքան սրտեր
հող են դարձեր:

Աղիզ սրտեր, խորունկ սրտեր սիրով վառուեր, հող են
դարձեր:

Ձեր բալէքը, ընկերներս մեր սրտերէն ելան-թռան,

Ախ ամենքն էլ էս աշխարհի անգուլթ կամքով հող են
դարձեր:

Ա.Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ